5. ՀՈՒՐՆԻԿ ԵՎ ՀՐԵՂԵՆ

Կէղնի, չէղնի, թագաւոր մը կէղնի, ըդոր ըսկի ավլատ ու թավլատ չէղնի։ Գիշեր ու ցերեկ կմնա մըշ էդ մարախին ու միտք ու մտալա կէնե։

Էդ թագաւորին մեկ քյահել խարախմ'լէ կէղնի, ասու տվածին դու իշե, էդ խարախ լէ անծին կէղնի։

Կէղնի օր մեկ ժուկ ու ժամանակ մը մեջ կընցնա, գիշերվա մեկին թագաւոր կքնի, էրաղ կտեսնի օր, մեկ չայիր-չիման տեղ մը ընլին ըռանկ-ըռանկ ծաղկորենքով, մեկ մարմանտ գետի մ'ափ ինք նստուկ է, ուր կուշտ լէ ուր պես մեկ ուրիշ թագաւոր մը։

Էդ թագաւոր ինք Արևելոց թագաւորն էր, դու մըսի ուր կշտի նստող լէ Արևմտոց թաղավոր կէղնի, ըդոր լէ ըսկի ավլատ ու թավլատ չէղնի։

Ասսու հրամանով էդ էրղի մեջ էդ տեղ, էղ էրկու թագաւոր ղիրար կտեսնին, կնստին, էդ ջրի խրախ խոշ ու բեջ (կբարևեն) կէղնին, մեկ լէ կիշին օր ջրի հետ մեկ խնձոր մը գլորելին գիգա, Արևելոց թագաւոր կթռնա տեղեն, կբռնե զէդ խնձոր, կբերե Արևմըտոց թագաւորի մոտ։

— Արի,— կըսե Արևելոց թագաւոր,— աստված խըսմաթ տրվեց մըզի։

Կը դնին զէդ խնձոր զուրանց առջև, մեկ լէ կիշին օր էնդիուց մեկ սիպտակ մուրուս դավրեշ մը գիգա, քյաշկուլն ի վիզ։

6—1086

— Եաշո,— կըսե.— Նստի մըտ ըդոնց։

Էրկու թագավոր լէ զուրանց ասվալ խըսա կէնին գավրեշին, դավրեշ կըսե.

— Իգա ձեր առջևու խնձոր օրթլխից կըկիսիք. կես մեկիդ. կես լէ մեկելիդ. կտանիք ձեր կնկտոց հետ կուտիք, քեջպներ լէ կիտաք ձեր ձիանուն։ Ասսու հրամանքով թը ձզի ավլատ կէղնի, թը ձիանուն՝ քուռակ,— կըսե ու կանեբևանա։

Էրկու թագավոր կշիվարին, կմնան դավրեշի խոսաց վրեն, ահտ կէնին հրտ իրար.

— Թը ընծի ախչիկ էղավ, քզի տղա, զիմ ախչիկ տամ զքու տղին, թը քզի ախչիկ էղավ, ընծի տղա, ժրխո դու քու ախչիկ կիտաս զիմ տղին։

Էդ տեղ էր, էրկու թագավոր ղուրանց խոսք կիտան, կառնին, բեշըք քարթմա (օրորոց գծել) կէնին, ու մեկ լէ կխրտին, կիմնան օր էրազ է. հեյվա՜խ կէնին, կտփին չոքերու ուրանց, մեկ լէ ձեռ կտանին զուրանց ջեպեր, կիշկին օր խնձոր օղորթ է։

— Հայլո՜,— կըսին,— մակյար էդ դավրեշ հրրեշտակ է էղե, մենք խապար չունինք։

Արևմտոց թագավոր զուր կնկա հետ կուտե զէդ խնձոր, Արևելոց թագավոր լէ զուր կնկա հետ, ու զքեջպներ լէ կիտա զուր ձիուն։

Ասսու հրամանքով ին ամիս, ին օր, ին սրհաթ, ին դախա օր կը թմի, մեկ տղե մը կէղնի, Արևելոց թագավորին, ըդ սահաթուն ախչիկ մ'լէ կէղնի Արևմտոց թագավորին։

Տղի յոթն օրն օր կթմի, Արևելոց թագավոր կխանչա ղմաճլիս (խորհրդականներ), օր տղի զանուն դնե։ Կքոմին թագավորի քուպարներ, կիտան-կառնին, տղի անուն կդնին Հուրնիկ։

Արևմտոց թագավոր լէ կքոմա ղմաճլիս. զընգոր աղչկա անուն լէ կդնին Հրեղեն։

Արևելոց թագավորի ձին տարին օր կթմի, որձ քոռակ մը կծնի, զձիու քոռկու անուն լէ կդնին Խամար-թայ։

Արևելոց թագավորն է՝ զուր տղեն կդնե հրմալ շուշարանտ օդեմ օր, ըսկի ինսընի էրես չտեսնա, զհաց ու ջուր լէ էրդրսեն կիտա։

Թագավորի տղա էր, օր քընց զօր կչոչներ, օրերուց օր մը կը քնի, նակաստան կխըրտի, կելնա, նըստի տեղաց մեջ, կիշկե օր թե մեկ հուրնիկ-հրեղեն ախչիկ մը, օր չուտիս, չխմիս, թամաշա էնիս, հանտա՜ նստուկ զուր կուշտ։ Դու մըսի, ս. Սարդիս, մեռնիմ ուր զորաց, ըերե զէդ ախչիկ թալե էդ տեղն ու գացեր է։

Էդ տեղ տղեն ու ախչիկ դիրար կհավնին, խոսք կիտան կաւ-նին, դմատնրքներ կր փոխին, կես գիշեր օր կթմի, ս. Սարգիս էլմը գիգա, զախչիկ կվերու, թալե թարքին, աչք բանալուն խբուցելուն՝ կտանե, ղուր տեղ կրգնե։

Էդ ախչիկ Արևմտոց թագավորի աղջիկ Հրեղեն էր, օր Հուրնի-կի հետ բեշք քարթմա էրած են։

Հուրնիկն էր, ղախչիկ տեսավ-չըտեսավ, էլ քենի գնաց ետ գնաց. բարկրցավ, դեղնավ, հալավ ու մաշավ։ Ջուղասլ գնաց թա-գավորին, թե.

— Ի՞նչ կէնիս օր Հուրնիկ ձեռաց գացեր է։

Թագավոր իմցավ ուր տղի աճալ, խանչեց բերեց զուր քուպար-նեիրն ու ոաջալներ, թամպա էրեց, ըսեց.

— Լուսուն թալալ խանչել կիտաք, զիմ հողի մեջ ինչ խրտրը ղանդին ու աղքատ կա թըխ զուրանց ախչկներ զարդրին, բերին իմ քոշք ու սարի առջև, դհոլ ու գուսանք զարկին, իմ տղեն նստի փանճարեն, իշե, որ մեկ ախչկան խնձորով ղարկե, զէն ախչիկ ուզինք գիմ տղին։

Լուսմթին էլ էրկիր բլավ ու էկավ, ինչ խրտրը ախչիկ կեր, ղրմեն թոփ էղան, էկան։ Մարդ կար օր զուր մեկ կով լէ ծախեց, առավ էրեց հալավ, հագուց ղուր աղջկան։

Թագավորի տղեն էր, զէդ բոլուք աղջկներու մեջ շուռ տվեց ղաչվին, դիտա իշեց, դեն իշեց, Հրեղենի սուրաթին ու օրինակին մեկ լէ չտեսավ, գլոխ տարավ բերեց, ա՜խ քաշելին էլմը մտավ ուր քոշք ու սարեն, չոքերուն տփեց ու գնաց էկավ մըջ հ՝օդին։

Թագավոր չարեն կտրավ, ղտղեն խանչեց մըտ ուրին.

— Տղա՜, լաո,— ըսեց,— իմ հողի մնջ ինչ խրտրը ախչիկ կեր, ղրմեն նշանց տվի քզի, չը հավնար, արի քու սրտի խորհուրդ ըսե ընծի թըխ հրմալ ահտ էղնի, իմ թագավորուտեն ծախիմ ու քու խոսք կատարիմ։

— Ափո,— ըսեց տղեն,— տուր ինձ խուրճի մը հ՝ընլին դեղին օսկի ու ղխամար քոռակ, ես իմ ձեռով զիմ մուրազն օր չը կատա-րիմ, մարդ չը կըռնա։

Ինչ չարա — մուքուն էրին, տղին հետ չէղավ, տղի բեն բան չը մըտավ, թագավորի լախեն կըտրավ, ըսեց.

— Լաս՜, քու մուր քու գլոխ, դու դինաս, գնա, աստված էղնի քզի յարտումշի։ .

Հուրնիկն էր, պագեց ղուր պապու ձեռ, գնաց զխամար քոռակ թավլից քաշեց, հ՝ընլին խուրճի օսկին թալեց զթարք, էլավ հեծավ-

Խամար քոռակ մըսի, ճնճուղ ըսե. բումպարակ հըմա փեքոլ կէներ ու սար ու ձոր կէներ մեկ ու կթոներ։ Շատ ու քիչ գնաց, աստված գինա, գնաց մեկ զարզամի ձոր մը ըռասթ էկավ, իշեց օր ձորու պռունկ մեկ ջեհել տղե մը ձիուց իջե. մզրախ զարկեի գետին, գլոխ կախե ու հըմալ գիլա, օր էր աստված նշանց չիտա։

Հուրնիկ զձիու գլոխ թողեց, մեկ ղանկուի հասավ տղի մոտ, կանավ։

—Հ՚որի՞ գիլաս, աղբեր,— ըսեց,— ի՞նչ է ձեռ տվե քզի, ըսե, ըսե բալքի դարտիգ դարմանմ՚ էնիմ։

— Գնա՛ զքու ճամբխուն, իմ դարտին դո՞ւ պտի դարման էնիս։

— Աղբեր, հ՚որի , ի՞նչ կէղնի, մեղավորցա՞ օր հարցուցի։

Տղեն փշում կանավ, դարձավ էտևեն իշեց ու ըսեց.

— Կտեսնի՞ս զիդա ձիավորտան, ըդոնք զիմ նշանլուն է զոռովեն քաշած կտանին, ես լէ էկերիմ հ՚ուտա բագլա կէնիմ, յա էն է օր զիս պտի սպանին, յան չէ՝ զիմ հախլուն զընգոց ձեռնեն պտի խլիմ։ Պարծանք չէղնի, ես լէ ջոջ մարդու տղա իմ, բեբախտ ֆալաք զուր չարխն օր օլրեց ու պապսի մեռավ, էլ օղլու (այլոց) ձեռ էրկընցավ վրես, առան զիմ հախլուն, տվին զէդ մարդուն։

Թագավորի տղեն դարձավ, իշեց, օր օղորթմա հողին ու թփին հսապ կեր, ղէդ ձիավորտանուն չկեր, մեկնավ տղի հետ ու էրկուս ջուխտ կանան մայտան։

Ձիավորտան դարձան, փեսի աղբրտոց ըսին.

— Աղբեր, ըդոնք էրկու մարդ, մզի դորա ամոթ է ընդոնց հետ կռիվ էնինք, դու յոթն աղբեր իք, գացեք զրտոնք մըլեք մայտնից գուս, դարձեք, արեք։

Փեսեն ու աղբրտիք զուրանց թատարուք տեսան, հեծան զձիան, քշեցին, հրտ հասնելուն-առհա, գուրզ մը թագավորի տղի առջև։ Թագավորի տղեն գուրզի ընկնել տեսավ, աչքեր մթնտեց, թողեց զխամար քուռկու գլոխ, քաշեց զթուր, ընկավ մըջ ուրանց, ինք տաս, ուր ձին տրանուհինգ սպանեց, ձիավորտանուն լէ ետք բերեց. հըմալ ցրվեց օր զքոռ Բաղդատ հասուց, առավ ղախչիկ, էկավ տրղեն լէ վերուց հետ, տարավ տղի պապու տուն, յոթ գիշեր հարսնիք էրեց, զընղոց հասուց ղուրանց մուրազին, ինք հեծավ ուր ձին ու յալլա։

Տղեն ետևանց բռռաց.

— Իմ անուշ աղբեր, քու անահուն աստված օր կսիրիս, քու գործ օր կամեցավ հաշողավ ու էկար, դիտա ընցար, առանց ղիսի տեսնելու չէղնի՛, չէղնի՛ օր էրթաս, հ՚որի օր քու աղեկուտեն շատ էղավ վրը իս։

Թագավորի տղեն էր, գնաց, շատ ու քիչ գնաց, աստված գինա, բոասի էկավ էլ մը կռվու մը։ Տեսավ օր յոթ աղբեր մեկ թարաքն կանած, բրռ մը ասկար լէ մեկ թարաք շանկաշանկ կը կռվին։ Դու մ'բսի զէդ յոթ աղբեր քուր էկած՝ տված է մեկ ուրիշ թագավորի տղի, ըդոնք լէ զուրանց քուր չտված, էդ սապապուն թագավոր ասկար էրե, էկե վըր ըդոց կռիվ, օր զոռովեն զախչիկ քաշե, տանե։

Թագավորի տղեն էդ տեղ դուշուրմիշ էղավ։

Հարքե (եթե) ես էրթամ շատի թարաքի, էդ յոթ աղբեր պըտի ըսին, թե վախեցավ, թե էրթամ յոթ աղբոր թարաքի, ըստապուն պըտի ըսին, թե ջահել տղա է, զուր հպարտուտենեն չը գինա ի՞նչ էնե, հ'ըմնուց խելըսին էն է օր էրթամ, բարև տամ, ո՞ր զիմ բարև վերուց, զէն թարաքի կէրթամ։

Քշեց գնաց՝ բարև տվեց. էն շատվոր թարավ զրդոր բարև բանի տեղ չդրին, յոթն աղբեր զբարևն առան, տղեն գնաց դեմ ընդոց ջերկի հետ ճոթին կանավ։ Առջի հեղ մեծ աղբեր մայտան մի տրվեց, ոնաց էկավ, ըսկի բան չէրեց, ասկար լու չխըրտըցուց, էն հըմալ դորով հ'ըմեն գացին, էկան, բան մը չէրին, դոր էկավ թագավորի տղին։ Հուրնիկն էր, զխամար քուռկու գլոխ թորկեց, մտավ մըջ ասկրին.

«Ցա՜ մըռնիմ քզի, բոզ ձիավոր ս. Սարգիս, դու իմտատ հասնիս», — բոռաց ու մտավ մըջ ուրանց. տասն ինք սպանեց, տրսնուհինգ զուր ձին, զըմեն լէ էրեց խուրտ ու խաշ, դրեց ի գետին, ղթոփալ Բաղդատ հասուց։

Յոթն աղբեր շիվարան, մացին տեղ ուրանց, զրմլա բան ոչ տեսած են, ոչ լսած։ Կռիվն օր դատարավ, պրծավ, առան զթագավորի տղին, տարան զուրանց տուն, յոթն օր խոնախ էրին, շատ ու շատ իքրամով. ըստապուն իրարու ըսին.

— Էդ մարդ զուր ջան տվեց մեր ուղուրին, զմըզի պրծուց. ի՞նչ փեշքեշ տանք, օր ըդոր լայաղին էղնի։

Պզտիկ աղբեր վերուց ըսեց.

— Հ'որի՞ ինչ տանք, մըր քուր էլ վի՞ր պտի տանք. հըմլա ազրահել ջեհել էլ ո՞ւր պտի գտնինք, տանք ըդոր, թըխ էրթա։

Էդոնք էլ գիրիշմիշ չէղան (չհամարձակեցան) օր թագավորի տղին բան ըսեն, պրզտիկ աղբեր էրսով էր՝ գնաց կանավ մոտ, ըսեց.

— Արի, զմեր քուր տանք քզի, դու էղի մզի մեծ աղբեր, մենք լէ քզի պզտիկ։

— Ձեր քուր՝ իմ քուրն է,— ըսեց թագավորի տղեն,— ես մու-

բազ ունիմ, քյանի զիմ մուրազ չըմ կատարերի, աստըվոր հարամ է կեցե ընծի։

Էդ տեխեն շնողկլա էլավ թագավորի տղեն, ու էլ մը էլավ ճամբախ տվեց առջև, շատ ու քիչ գնաց, աստված գինա, գնաց Արևմտոց թագավորի քաղքին մոտեցավ. հովիվ մը ըռասթ էկավ, հարցուց.

— Բարև քզի, հովիվ աղբեր, ձեր էրկիր իմա՞լ խոնախ կառնին։

— Մեր էրկրի ադաթն է,— կըսե հովիվ,— գյամ կթորկին ձիու դլխուն, ձին վիր տուն օր կանավ, էնտեղ կիջնաս։

Տղեն է, զձիու գլոխ կթորկե, է՛ խամար քուռակն էր, իմաստուն, զուր բան դիներ, քշեց, դեմ գնաց պառվու մը դուռ կանավ, տղեն բոռաց.

— Պառավ, պառավ, արի՛ դուս։

Ջատուքար պառավ մի լըմլըմբալին տնեն էլավ դուս։

— Ջոջո, զիսի էսօր խոնախ չէնի՞ս։

— Քու գլխուն ու արևուն մեռնիմ, թագավորի տղա, դու իմ քողտիկ (հյուղակ) իմա՞լ մտնաս, քու լայեղին չէ, տեղ չկա, գնա՛, թագավորի տուն իջի։

Տղեն էր. «Քյոռ Օլսուն յոխսուլուխ» (կուրանա աղքատությունը). ձեռ տարավ ի ջեպ, բուռ մի օսկի հանեց։

— Հան քզի, ջոջո,— ըսեց,— ղընծի ու զիմ ձիուն տեղ էրե։

Պառավ զօսկիքն օր տեսավ, օտներ գետնեն կտրավ, ջվտրկեց, մտավ ի տուն, էլ աման վըր ամնի, պուտուկ վըր պուտկի զարկեց, տեղ լենցուց, խրսիլ մը փռեց ի տախթ, տղին խանչեց, էկավ նըստավ ի վրեն, զձին լէ կապեց հավու թառի տակ։

Տղեն էլմը բուռ մ՝օսկի հանեց, տվեց պառվուն։

— Գնա՛ շուկեն,— ըսեց,— ինչ որ պետք է, բեր։

Պառավն էր, ջվտիկ մի զարկեց, դուռ, մեկ լէ ի շուկեն, թագավորի տզի լայեղին ինչ օր պետք էր, վազելեն առավ էկավ, շարեց տախտի օրթեն, ըստապուն նստավ, պաղբերնավ ու իշեց թագավորի տղի էրես։

Դոր մի մնաց, թագավորի տղեն հարցուց.

— Ջոջո՛, իդա ի՞նչ դհոլ ու դուսանքի ձեն է, քաղքի միջուց գիգա։

— Թառ՛ւ, լաո, ջոջոն խուրսյան էղնի քզի, մեր թագավորի աղչկա հարսնիքն է, մըկա ուզած է հլամունսի օր տանին, աղչիկ չէրթա, էգ մեր թագավոր վաիտով զուր աղչիկ Արևելոց թագավորի հետ բեշրքարթմա կէնե, օր ջոջրցավ, տա ընգրա տղին, հավատամ ուր ղորաց, բող ձիավոր ս. Սարգիս, ավուր մեկ կթալե զմեր

Թագավորի ախչիկ դուր թարք, կառնե կտանե, Արևելոց թագավորի տղի օդեն, էնտեղ գիրար կտեսնին, կէղնին մաշուղ իրարու, մատնիք կփոխին, էլմր կդարձու, բերե։ Մկա աղջկա հարսնիքն է, էկած օր տանին ուրիշ թագավորի տղի, աղջիկ լէ մեկ ձեռ աղուն է առե, մեկել՝ սորանին (սուր). որն օր թ՝էրթա մոտենա, յա. աղուն պտի խմե, յա ուրին ղարկե սպանե. մարդ ասկար, կնիկ, ճիժ, բատան բռնած՝ կանած, մարդ չիշխնա մոտենա։

— Եբոր հրմալ է, ջոջո,— ըսեց տղեն,— առ ղիղա մատնիք, տար տուր ուր նշանց, քըզի բան չըսե։

— Թաո՜ւ, գլխուդ արևուդ մեռնիմ, լաո,— ըսեց պառավ,— ես չիշխնամ օր էրթամ, թագավորի աղջկան զավալ մ՝էկածին պես դիսի կսպանե։

— Ըսկի մը վախե՜նա, ջոջո, եբոր գացիր, աղջկան մոտեցար. ղմատնիք իցկե մատդ ու տար բեր. օր զմատնիս տեսավ, ինք ըրխո դբղի կիանչե ուր մոտ։

Պառավն էր, էլ ձեն չտվեց, սուս ու փուս էլավ, գնաց։ Պառվու տուն չակոլի, չկեր մոտ ջատուտե՞ն, հրտ գահուն հազար սատանուտեն մեկ փարի պես հազրեց, դրեց ի ջեպ, աղջկա օդին օր մոտեցավ, մե խալապալըխ դրեց, մարդիկ դեն քաշվան, պառավ զէն էն դեն ճխտեց, զէն էն դեն, ճամբախ լենցուց։

— Դու հաշ կեցեք, ես մկա զընղոր ճամբխու կէցկեմ,— ըսեց։

— Դիտի՜, պառավ, բալքի դու բան մ՝էնիս, չորս թարաֆուց բոռացին էր հաշամ մախլուխ (խռնված ամբոխ)։

Հ՝մեն ուրախցան, ճամբախ լենցուցին պառվուն, պառավն էր, գունտ ու կծիկ զինք հասուց աղջկա օդի դռան մոտ, զճկուբ բանձըրցուց, քենի մ՝հաղ տարավ, բերեց, թագավորի աղջիկ հրտ տեսնելուն, ղուր մատնսի շավխից ճանչցավ, հրտ գահուն ձեռաց աղուն զէն էն դեն թափեց, զէն էն դեն ու վազավ պառվու հ՝առեջ։

—Ցամա՜ն, ջոջո,— ըսեց,— դու բարով իգեր, ըդ մատնսի տերն դո՞ր է։

— Հանտ ա իմ տուն է, հաշ կեցի, ձեն մը հանի։

Աղջիկն էր, գրկեց զպառվուն, տարավ ի ներս, մախլուխն օր զէդ բան տեսան, խնտացան ու թողին քաջվան։

Ջուապ գնաց թագավորին, թե պառավ խանմիշ էրե զախչկան, ձեռաց աղուն թալե, էկե վրը ճամբխուն։

Թագավոր ամբ էրեց, դհոլ գուսանք զարկին, բռնեցին հարսնիք ու խաղցան։

Թագավորի խնամիք զթատարուք տեսան օր էն լուսմթի զախչիկ տանին։

Հուրնիկն էր. մարախ ղուրին փաթեր էր, ա՜խ կէներ օր ղծուխ պնչներուց կթալեր, ջատուքար պառավ լէ օտք մը աղշկա մոտ, հա մեկ աղին, ղրողի գլրի պես հա կէրթեր ու գիղեր։

Օր հասլ պառավ ախչկան սորվըցուց. ախչիկ ջուապ էրեց ուր թաղավոր պապուն թե.

— Խնդիրք կէնիմ ուրնե, թըխ իրեք օր ամր էնե, օր ըսկի մարդ դուրս չելնա, ես էրթամ խաս պաղչեն սեյրան էնիմ, ժուռ գամ, հավեսսի հանիմ, նոր թըխ զիսի դնե ճամրխու։

Թագավորն էր. ամր էրեց, թալալ տվեց խանչել, իրեք օր վըր իրար ինսան դետրզի (մարդ ըսված) դուս չելավ։

Պառավն էր, դախչկա խաս շորերն հադուց, ղինեց-ղարդրեց, ու առավ գնաց ի խաս բախչեն, ղախչիկ թորկեց էն տեղ, ինք խապար հասուց տղին, առավ ղտղեն լէ բերեց մրտ ախչիկ, էդ տեղ տեսան ղիրար, խնտացան, իրեք օր վըր իրար մացին։

Իրեք օրն որ թմավ, տղեն ղուր հալվըներ հադուց ախչկան, ախչկան առավ, ինք հադավ, ղախչիկ ճամբխեց պառվու տուն, ինք լէ պառվու հետ դեմ գնաց թագավորի տուն։

Մեծամեծ մարդիկ իղին ուղին թագավորից, օր ղախչիկ ճամրըցու։

Թագավոր ամր էրեց, հարսնցխուրներ թափան, էկան. դհոլ ու գուսանք զարկեցին, ջրինտ խաղցան, քեֆ ու ուրախուտեն էրեցին. հմալ օր աշխարհ հ՝ըմեն թափան տամաշեն, խոլասա, էլ ի՞նչ գլոխ ձի ցավցում. մեկ ղոոպա հաշամաթով ծանտր ու աղիզ ղախչիկ հեծրցուցին վըր ձիուն ու առան գացին։

Ըսկի խապար չունեն, թե ղախչիկ թորկած, ղտղեն է կը տանին։

Ղախչիկ տարողներ լէ յոթն աղբեր են, ընդոնք՝ լէ ուրիշ թագավորի տղա։ Տարան ղախչիկ ուրանց էրկիր, բերին վըր ուրանց ջոջ աղբոր պսակին, յոթն օր, յոթ գիշեր զհարսնիսն էրին, խաղցան, տրոշկին։ Հարսնիքն օր ֆրղավ, բերին հարս ու փեսին մրտ իրար։

Ախչիկն օր տեսավ փեսեն մեկ խրոբճուկ ու պաբուկ մե, ըսկի բանի տեղ չդրեց, չելավ կանավ, փեսեն հեռոտավ, ըսեց.

— Մակյար մհալ չէնի՞ս օր չելնիս վըր օտաց, դու շա՞տ մախուլ շան մը ախչիկ իս։

Խոսք շատ տարան-բերին, նաղ ծախին վըր իրար, խոլասա, բարիշան, առան խնտանալ։

Կես գիշերն օր ընցավ, հ՝ըմեն քնան։ Հուրնիկն էր, ղախչկուտեն գրեց իշուր, գողտուցիկ էլավ, առավ զփեսի խանճալ, զփեսեն

բրդեց, էրեց կտոր կտոր, լցեց մըշ ջլերուն, խոճա էլավ ախոռից քաշեց զձին, ու հեծավ — դորի՞ս պառվի տուն, էկա քզի։ Գնայ իջավ պառվու տուն, ինքն ու ախչիկ տեսան զիրար, խնդացան։

Սաբախտան խրտ աղոթրնին փեսի մամ գիկա, կտեսնա օր զտղեն սպանած, կտրռտած, լցած մըշ ջլերուն, խուտում կկոտրի, կտփա վըր չոքերուն, հավար կպրծու դուս։

— Գիտի՛,— կըսե,— զախչիկ ղտղեն սպանե, թորկե, փախեր է։

Աշխարհ իրար կընցնա, տղի աղբրտանք դաֆե-հավարեն կըզարկին, տուն գլոխ մեկ մարդ կհեծնա, գիգա թագավորի սարայու հ՝առեճ կկանի։

Թագավոր որին օր ձի չկեր, ձի կիտա, որին օր սիլահ չկեր սիլահ կիտա ու կըսե.

—Կէրթաք Արևմտոց թագավորի քաղաք, հողով ջրով կընցուք, կդառնաք։

Ջալխամչի (արագավազ) մեկ ձիավոր լէ կճամբե, օր Արևմըտոց թագավորին ըսե — զուր թատարուք տեսնի։

Ձիավորն է գոլըլի պես կէրթա Արևմտոց թագավորի մոտ, զուր ջուապ կիտա, կդառնա։

Արևմտոց թագավորն է, կխանչե ղուր բետաբետ մարդիկ, կըսե.

— Իմ գրողտարուկ ախչիկ ղուր նշանլուն սպաներ է, ինք լէ, մարդ խապար չունի, թե դո՞ր է, մկա ասկար էրած է օր գան վըր մի, էլեք օր թատարուք տեսնիք։

Էդ խոսաց վրեն զլզլուն ընկավ քաղաք, մեր զմանուկ ուրացավ, տան գլոխ մեկ մարդ հեծան, մըշ քաղքին մարդ չըմնաց, գացին յոթն աղբոր ասկրի հ՝առեջ։

Կռվի եռ վախթին Հուրնիկն էր, պառվու տնեն քաշեց զԽամարթայ, հեծավ, վազեց մըշ կռվուն։ Ձիուն հրտ ղանկու մի խտելուն՝ ձին կատղավ, քշեց միչ ասկրին, զէն էնդին զարկեց, զէն լէ էն, ջարդ ու փշուր էրեց, դրեց գետին ու ինք դարձավ էլմը էկավ իջավ պառվու տուն։

Էլմը ջուապ էկավ թագավորին, թե «Ձքու թատարունք էրե. յան դու ղմզի հողով, ջրով կընցուս, յան մենք ղքզի»։

Հողին, քարին հրսապ կեր, էդ ասկրին չկեր։

Էլման էդ թագավոր տմպլիկ զարկեց, քոման էկան, էրկու հըզար մարդ ջորով կէղնեն, գացին մըշ մեյտնին կանան։

Վախկոտներու սիրտ վրռվրռուն ընկավ. իրարու կըսեն.

— Թալաշ մը քաշեք, մըկա կարմիր ձիավոր կհասնի։

Հրտ ըսելուն կարմիր ձիավոր մըջ մալանին ճուկ կանավ։ Էլմը ընկավ մըջ ասկրին, ջարդեց, խալի պես թափեց վրը իրար ու դարձավ։

— Տո էդի ս. Սարդիսն էր, ս. Գեորգն էր, մզի իմաատ հասավ,— կրսեն իրարու։

Էդ յոթ աղրոր մոտեն հինդ սպանվեր էր, մացեր էր էրկուս, էդ էրկուս ըէ խանչեցին ղրմեն գուրանց հողի մարդիկ ու ըսին.

— Էսօր մրր մեռնելու ապրելու օրն է, խիրաթի (նախանձախնդրություն) օր է. «Նամուս թալած է շան, շուն չը կերեր է». Ցա էրթանք էդ քաղաք շան ք... իրիցենք, յա էն է գլոխ մզի տանք դուս, պրծնինք։

Էդ խոսքի վրեն հարի կնիկ լէ հեծավ, էլ դեվա, ձի, ջորի, էշ, եղ յմնաց, օր չհեծան, գացին. մացեր էր մինակ մեկ պառվու մի տղա, էն լէ հեծավ զուրանց ճետ, թունտրա անթրոցն առավ ի ձեռ ու գնաց, կանավ մըջ ասկրին. ասկար նա էն էր լար, նա էն էր ծիծղեր. էդրմալ խայտառակ բան ո՞րն էր տեսե, հ՚ըմեն փորխոց (շատ ծիծաղելեն փորը ցավել) էղան վրը էդ տղին։

Էլմը ջուապ էկավ Արևմտոց թագավորին.

— Զուր թատարուկ թրի տեսնա մեր կռիվ կռիվ է։

Թագավոր խանչեց, ուր սատրազամից հարցուց.

— Էն ի՞նչ ազնահուր մարդ է օր, իդա լէ էղավ էրկու հաղ. գիգա, զրտոնց ասկար կշարդե, կէրթա, կռահեցեք (ուշադրություն դարձրեք) տեսնեք, էդի ասու մարդ է, ի՞նչ է մեր իմտատին գիգա։

Խոլասա, գլոխդի չցավցում, էլմը էրկու թարաֆեն էկան իրար, սուր ու սաթ (խառնափնդոր, արյունահեղ) կռիվ մ՚էղավ օր, էլ աստված նշանց չիտա, հրմալ էղավ օր, էլ արուն վերուց զչանդրկներ, կէրթեր, կռվու նեղ վախթին էլմը, Արևելոց թագավորի տղեն հասավ, ղրմեն ծեփ էրեց գետին, էլ մարդ սաղ չթորկեց։

Մացեր էր մեկ պառվու տղեն, էն լէ զուր ճիտու գլոխ թորկեց, ատատորեց, մեկ անթրոց մ՚ա՛ռհա թագավորի տղի գլխուն. թագավորի տղի գլոխ կոտրավ, ընկավ պառվու տղի ետև, զարկեց զէն լէ սպանեց քոք կտրեց, հրմալ օր խաբրբեր (գուժկան) լէ չպըրծավ։ Ըստապուն դարձավ օր էրթեր ուր խոնախ, ճամբու հետ ըռասթ էկավ թագավորին, թագավոր բերեց, զուր դաստրմալ կապեց ըդոր գլխու բրնին (վերք)։

Տղեն գնաց, իջավ պառվու տուն, զուր բրին լվաց, դաստրմալ հ՚արձկեց, հրտ պառվուն էլմը ճամբեց թագավորին։

Պառավ գունդ ու կծիկ վազավ թագավորի դիվան։ Թագավոր հարցուց.

— Պառավ, էդ ի՞նչ դաստրմալ է։

— Թագավոր սաղ մնա, քու դաստրմալն է, որ կապեր էր էն տղի բրնի վրեն։

— Պառա՜վ, էդ մարդ քու տո՞ւնն է։

— Հրամանքիս, թագավոր ապրած, իմ տունն է։

Թագավոր էլ չբագլեց, մարդ ճամբխեց, ղտղեն առավ էկավ. շատ խնտացավ վըր տղին, ետի սողին հարցուց.

— Դու ի՞նչ մարդ իս, ո՞ւստից գիզաս, դո՞ր կէրթաս։

— Ես Արևելոց թագավորի տղեն իմ, կուղիս զիսի յա խալաթ (պարգև) էրէ, յա ջալաթ (գլխատել). քու ախչիկ լէ հանտա իմ մոտն է։

Թագավորի էրազն ուր միտքն ընկավ։

«Օղորթմա օր,— ըսեց մըշ ուր մտաց,— ճակտի գրուկ չքանդըվի»։

Նոր բերեց զախչիկ պսակեց վըր տղին, յոթն օր, յոթ գիշեր զհարսնիսն էրեց, կերան, խմին, փառավորան։

Թագավորի տղի քառսունքն օր թըմավ, խնդրվավ թագավորից.

— Իմ իզին տուր, էրթամ իմ հոր էրկիր։

Թագավոր լէ էլավ ինչ օր ուր շանին (անվան պատվին) կը վիլեր, քառսուն դևի ու քառսուն ձիու բեռ՝ օսկի, արծաթ, պղինձ պղընձըկալ բարձավ հ՝ըմեն պատրաստուտենով զախչիկ դրեց ճամբու։

Իրեք օր օր գացին, թագավորի տղեն իզին տվեց ուր հետի մարդկոց, ետ դարձուց, ըստապուն առավ զուր կնիկ ու դեմ քշեց, գնաց, իջավ էն յոթ աղբոր տուն, օր զրնտոց կովուց պրծուցեր էր։

Գիշեր մը մնաց էդ տեղ. էլ պատիվ, էլ ազաթ, էլ իքրամ. լուս ու մթի շուտ աղոթրնախառն ընկավ ճամբախ։

Շատ ու քիչ գնաց, աստված գինա, գնաց տախլ էղավ էն տըղին օր, զուր նշանլուն պրծուցեր էր ուրան, ժըխո էդ էրկու լէ իրուր հետ աղբեր էղած են։ Քենի մ՝օր լէ էդ տեղ մացին, էլան էլմը ընկան ճամբախ։

Փշումը տեղ գացին, չը գացին, նակաստան մեկ աճուճ-մաճուճ մը, ինք քրց թիդ մը, մուրուս էրկու թիդ, գոբալն ի ձեռ՝ քիսլ էլավ, ըդոնց առջև կանավ։

— Թագավորի տղա՜,— ըսեց,— քու հախլուն չի՞ տաս ընծի։

Թագավորի տղեն զուրին էն տեղ չդրեց (չլսելու զարկավ).

«Ըդոր քյամալն ինչ է օր,— ըսեց,— ղիսի դնիմ խրտ ընդրանճանճն ի՞նչ է օր, զուր ճենճն ի՞նչ պտի էղնի»։

Էդ աճուճ-մաճուճ մեկ լէ ըսեց։ Թաղավորի տղեն էլմը ձեռ չհանեց։

— Վա՛յ դիտի,— ըսեց,— դու ըսկի՞ ղրնծի չըս քարթի ու գորալ մը առհա՛ բերեց թաղավորի տղի վըղկոթին։ Թաղավորի տղա, էսօր չըս մեռերի, հազար տարի հ՚առեշ իս մեռե. տղեն ընկավ ի դետին։

Աճուճ- մաճուճն էր, խոճա էլավ, բռնեց թաղավորի աչկա ծամերուց ու ինչ խրտար մալ ու դովլաթ կեր՝ վերուց խրտ ուրին ու դեմ գնաց ուր էրի դուռ, կանկցուց, զապրանք լցեց ի ներս. զախչիկ լէ տարավ, դրեց մըշ ի շուշաբանդ հ՚օգի։

Կեճտանկեճ թաղավորի տղի հալն էկավ ի գլոխ, զաչքն բացեց, դես ու դեն իշեց օր, նա թաղավորի աչիկ, նա մալ, նա դովլաթ, ինքն ա մացե, մեկ խամար քուռակ, օր հանտե կանուկ վըր ուր դլխուն փեքոլ (ոտով գետին խփել, փորել) կէնե։

Մեկ խելի դուպարով էլավ, կանավ վըր օտաց, զինք անճախ թալեց խամար քուռկու պառեկին ու փոռ ու փոշման էլմը ետ դարձավ էկավ մըտ ուր աղբրացուն։

— Յա՛, յա՛, խեր էղնի, թաղավորի տղա,— ըսեց,— էդ ի՞նչ հալ է, էդ ի՞նչ բան է, հ՚որի՞ն իս հըմալ փոսիտա էղե։

Թաղավորի տղեն մեկիկ- մեկիկ զուր գլխու գալիք խըսա էրեց։

— Աստված քու տուն չակոլե,— ըսեց աղբերացուն,— զէդ էնող Հաճի-Ֆենճոն է, կանի զդրա պատմութեն քզի խսա էնիմ։ Էդի է՛լ աշխարհք չթորկեց, օր չավիրեց, մըր քաղաք լէ ըդոր ավերուկն է։ Զրդոր բռնին, դրին մըշ փռան, իրիցավ, էղավ փոշի, զփոշին լէ տվին քամու հ՚առեշ, էլմը սաղցավ, էկավ, մզի գարար տվեց։ Զէտի հաղմ լէ շան ք.... վառեցինք, կտրռտեցինք, շներու հ՚առեշ թալեցինք, յոթ տարվա անոթի գիլու բերան տվինք, էլմը չարա չէղավ. սաղցավ, էկավ։ Մկա հ՚ըմեն շաբաթ օր մեր դոլվթի դռներ բաց կթորկինք, Հաճի-Ֆենճոն է, գիգա, զուր քեֆ ուզած բան կքոմե, կդխիրե վըր իրար, կէնե խոճա դեզ մը, կիտա զուր հ՚առեշ ինք կգըլվըլա ինչ օր սատանի կծկի ու զէն լէ կգլորե ու կէրթա։

— Ապա,— ըսեց թաղավորի տղեն,— ես իմա՞լ տեսնամ զՀաճի-Ֆենճոն։

— Լուսուն շաբաթ է, քաղաք քաղքով պտի էլնանք, դռներ թորկենք բաց, օր զուր թալնած բաներ առնե-տանե, քզի չէղավ,

խսիլ մը փաթինք, դնինք փողնի ճար (դռան ետև նեղ տեղ) օր էկավ, կտեսնաս թը ինչ ջանավար է։

Շաբաթ օր օր էղավ դռներ ղրմեն թորկին բաց. տղեն պաղտվավ դռան ետև, տեսավ օր հանտե Հաճի-Ֆնճոն գլոր-մլոր էկավ, զէդ տան միջուն լէ ինչ օր աղեկ բան կէր, ղրմեն սրբեց, տարավ. ըստապուն էլավ դուս, ինչ խրտար մալ օր քոմեր էր, էրեց խոճա դեզ մը, դրեց ի շալաք ու ընկավ ճամբախ։ Տղեն տափուկ տեղեն էլավ, էտևանց իշեց, մաթ էղավ վըր ըդոր էրթլուն։

Իրկուն օր էղավ, աղբերացուն հարցուց.— Աղեկ թամաշա էրեցի՞ր։

— Տեսա, աստված ըդոր տուն չակոլե,— ըսեց տղեն։

— Ըպա ի՞մալ էնինք, ըդոր հոգու տեղ իմնանք։

— Հունար կմնա թաղավորի ախչկան, էն բալքի բան մ'էնե։

Լուս ու մթին էլան, գողտուցի գացին Հաճի-Ֆնճոի էրի (այր) դուռ, էն դին, էն դին դախմնեցին, ծակ մը բացին, դուզ էլան ախչրկա նստած օդեն, ծրկի բերան լէ շինեցին օր Հաճի-Ֆնճոն չտեսնա։

Նստան, ախչկա հետ փշում զրուցին, ըստապուն ըսին.

— Իրկուն օր էկավ, հարցո՛ւ տե՛ս, ըդոր հոդին ի՞նչ տեխն է։

Ըդոնք էլան օր իգեն, ախչիկ կպուչկավ ընդոնց թե.— Ես լէ դիդամ։

— Տո դու ծռե՞ր իս, դո՞ր դիգաս, քզի ասսու գոգ լէ հասունք, Հաճի-Ֆնճոի ձեռնեն չընք պըրծնա, նստի, բալքի հոգու տեղ իմնաս, ըդրով չարե մ'էնինք, թը չէ՝ ուրիշ իլաճ չկա։

Ախչիկ խանմիշ էղավ, ըդոնք էլան գացին ուրանց տուն։

Իրկվան Հաճի-Ֆնճոն օր տուն էկավ, իշեց օր ախչիկ թիզ մը զմռթներ կախեր է։

Ըսեց.— Ախչի, հ'որի՞ իս քու նիաթն էրե, մակա՞ր ես թաղավորի տղից պակաս մարդ մ'իմ, չտե՞սնիս, չէ՞ աշխարհք իմ ձեռ զար է։

— Ես նիաթ չէնիմ, ըպա ո՞րն էնե,— ըսեց թաղավորի ախչիկ,— բերեր իս զընծի իգա անվերի սարի գլոխ, նա՛ մարդ կա, նա՛ մատաթ, չուրի իրկվան լալ ու կյառ կնստիմ, հզար բան մըտքովս կընցնա։ Ես օր քառսուն շառի (աղախին) տեր ենք, մկա տախտի ավլող մ'լէ չունիմ, ըսկի չէ՛, քու հոգու տեղն ըսե, զէն զարդրիմ, նստիմ հետ խաղամ, օր սիրտսի ֆառահնա։

— Է՛յ կնիկ, ի՞նչ թալաշ կքաշիս, իմ հոգին քու ցախավելն է։

Սապախտան Հաճի-Ֆնճոն էլավ ավ ու խուշի, թաղավորի

տղեն էլմը մտավ ծակեն, էլ աղչկա մոտ հարցուց,— Իմցա՞ր զհոդու տեղ։

— Հա՛, ըսեց, իդա ցախավելն է։

Փշում նստան, դրուցին, Հաճի-Ֆնճոի դալու վախթն օր էղավ տղեն էլավ դնաց։ Հաճի-Ֆնճոն էկավ ի տուն, կնիկ ուրախ-ղուրախ էլավ հ'առեջ կանավ.

— Յա՞, խեր էղնի, թագավորի աղչիկ, էդ ի՞նչ բաս է, էս օր էլար իմ հ'առեջ կանար, էդ ի՞նչ խրձիկ է ղարդրեր իս, բոներիս ձեռդ ի։

— Քու հոգին է, դու չըսի՞ր՝ «Իմ հոդին ցախավելն է», ես լէ ղարդրեր իմ, վրեն կուրախնամ։

— Աստված քզի խեր տա, կնիկ արմատ իս, ինչ էնիմ, ծամերդ երկեն է, հմա խելքդի պակաս, ցախավել լէ էղնի՞ մարդու հոդի։

Աղչիկ էլմը ղուր նիաթ կախեց, կծկավ ի քոշե մի։

— Ի՞նչ էլմը մոթներդի թիզ մի կախիր, հոդիդ խո չէլավ, հա՛, ինա կոճն է իմ հոդին։

Ախչկա սիրտ փշում բացվավ։ Լուսամթի Հաճի-Ֆնճոն էլմը դընաց նեչրուտենի։ Էնի դնաց, թագավորի տղեն էկավ, հարցուց.

— Դո՞ր է Հաճի-Ֆնճոի հոդին, խապար էղա՞ր։

— Հա՛, ըսեց, իդա կոճն է։

— Կնիկ. էլմը խաբեր է ղքղի։

Իրիկուն էղավ, տղեն էլավ դողտու քաշվավ։ Հաճի-Ֆնճոն էկավ իրիշկեց էրի հ'առջեու ղռան սանտի քարին, ըստապուն ճըկութ թալեց էրի դրռան վերևու մեծ զնար շրջեց մեկ դիու, ղդուռ բացեց, մտավ ի ներս, էլմը զնարով փակեց զդուռ։

Թագավորի աղչիկ էլավ, կանավ, ըտհաղս զղարդրուկ կոճ ցուցուց։

— Թագավորի աղչիկ, էդ ի՞նչ է,— ըսեց,— բոներիս ձեռդ ի։

— Չէ՞ քու հոդին է։

— Է՛յ, աստված զէն քու փշուր խելք լէ առնի... Հաճի-Ֆնճոն դրռ խոսք չթամրմեր էր, ախչիկ զկոճ զարկեց գետին, մռուդ (դեմք խոժոռցնել) կախեց ու գնաց՝ հեռուն նստավ։

Հաճի-Ֆնճոն ըստապուն էլավ, փաթվավ ախչկա վիզ, հար ինչ ճնճղու լեզու կարդաց, ախչիկ հետ չխոսավ։

— Կնիկ,— ըսեց Հաճի-Ֆնճոն,— ախր ի՞նչ էրի՝ քու ձեռնեն չպրծա, դր կանի, խսա էնիմ քզի զիմ հոդու տեխ։ Իմ հոդին՝ թագավորի ախչիկ, իրեք հատ ճնճուղ է, մեկ դեղին, մեկ նարինճ, մեկ

լէ բալաք (խայտ). աշխարք զրմեն թափին, չկրնան ընտրցան ուրանց տեղրանուց ժաժ տան. հ՚որի օր իմ էրի դուռ սանտի մեջ դրուկ ին, մեկ մեծ զնար մ՚լէ վրեն քաշուկ, արճիճով շինուկ է։

— Զրմ ավտնա,— ըսեց թագավորի ախչիկ,— մարդու հոգին լէ՞ ճնճուղ էղնի։

—Կնիկ, իդա դամ, իդա էրթամ (երդման ձևն է), «Բխավ լէ մեր է բյագե» (Հին մարդոց ուխտն ու դաշինքն էղնի), օղորթ կը-սիմ։

Ախչիկ ուրին խրստու բրլելուտենի կդներ։

Սապախտան դրռ ադամամութ չտվեր էր, Հաճի-Ֆնճոն էլավ, դնաց ուր նեչրուտենին։

Թագավորի տղեն էլմը էկավ ախչկա մոտ, հարցուց, ախչիէ նաղլ էրեց.

— Ըստոր հոգին դռան մեծ քարի տակ, մըշ սանտին իրեք ճնճուղ է։

Էդ իոսաց վրեն թագավորի տղեն ավտրցավ, էլավ շուտ մը գնաց, զուր աղբերացուն լէ գտավ, առան բահ ու քրիչ, էկան իրեք օր վըր իրար քանդեցին, իրեք օրն օր թմավ, իշան ի մեծ զնարի վրեն, զնար տվին մեկ դիու, մեկ խորոտիկ սանտ մը էլավ, օր չու-տես, չխմես, թամաշա էնես։ Զսանտի բերան բացին, իշեցին, օր ախչկա ըսածի պես՝ իրեք նխշուն ճնճուղ ի մեջ կճրլվրլան։ Արև լէ մացեր էր մեկ բաժ օր պատեր, մեկ լէ իշեցին, օր հանտե, սարի գլխուց Հաճի-Ֆնճոն կգրլվրլա ու գիգա։

Հաճի-Ֆնճոն տեսավ, օր ուր էրի դուռ խարալտու (սևություն) կէրևա։

—Յա՛,— ըսեց,— իդա էղավ հղար տարի, հավքն ուր թևով, օձն ուր պորտով իմ էրու դուռ չէկեր էր, իդա ի՞նչ բաս է, էս կա ու չկա, սատանուտեն իմ կնկա տակն է։

Աղա, թե մեկ օտք ուներ, տըսվերկուս լէ ճարեց ու հանքակը-տուր վագեց. հրմալ գիդեր, «ինչ օր Շամա գրողի»։

Տղեկներ իշեցին օր Հաճի-Ֆնճոն կմոտենա, թագավորի տղեն զմեկ ճնճղու գլոխ կտրեց, հրտ կտրելուն՝ էն տեղ Հաճի-Ֆնճոի գլոխ ցավաց։ Հաճի-Ֆնճոն էլ չկանավ, հա՛ կէներ ու գիգեր։ Թե կհասներ, վա՛յ էկեր էր, տարեր էր թագավորի տղին ու ուր աղբրացուն, ղընտոց ավագ կտոր՝ զավագ ականջ կթորկեր։

Թագավորի տղեն զմեկ ճնճղու վիզ լէ թռուց. Հաճի-Ֆնճոի շո-քերու խուտում կոտրավ, հա կշոքրռտեր ու կէլներ. կէներ օր գո-բալ մարմներ, վըր քյալլին գիգեր, խվաթ չմացեր էր մեջ։

Թագավորի տղեն զհետին ճնճղու վիզ լէ պոթ էրեց, հրա կըրելուն, տեղրըստեղ Հաճի-Ֆնճոն ընկավ, մեկ հաղ բերան բացեց, խբուց, չորցավ, օտներ պժեց, մորուս ցցավ ի դուս։

Թագավորի տղեն ու ուր աղբրացուն վաղմելեն գացին վըր սատկուկի ջանակին, մաղմաղ ղմուրուս փետեցին, զչանտակ լէ վառին, փոշին տվին հարավ քամու դեմ։

Ըստապուն էկան, ղէրի դուռ բացին, աշխրքի ինչ խրտըր մալ ու ղոլվաթ կեր՝ էդ տեղն էր, քաղաք քաղքով էրկու ամիս կրեցին, նոր ետք էկավ։

Թագավորի տղեն էր, առավ ղուր հախլուն, ինչ խրտըր մալ բերած էր Արևմտոց թագավորից, էրկու էնքան էլ էդ տեղեն բռնեց. ուր աղբերացուի հետ լէ շնողկլա էղավ ու ընկավ ի ճամբախ։

Էդ էրկրի մարդիկ լէ նոր ըռհաթան ու ակնչխախանտ նստան վըր ուրանց մալերուն, դրռ հալա մըկա թագավորի տղին դվա կէնին, օր զուրանց հոգին Հաճի-Ֆնճոի ձեռնեն պրծուց։

Թագավորի տղեն էր, շատ ու քիչ գնաց, աստված գինա, գնաց մոտեցավ զուր պապու քաղքին։ Ըռասթ էկավ մեկ հովվիմ օր, յան տվե զոչխար սարի կող, ինք լէ նստե բարձր դարի մը գլոխ, բըլուրն առե ի ձեռ, քոլողն իշուցե վըր աչքերուն, ու անուշ մղամից մը առե ու դիգա։

— Օխա՜շ,— ըսեց թագավորի տղեն,— շուտունց բլուրի ձեն ակնչիս չառեր էր, հովի՜վ, հովի՜վ, մեկ գիտա, արի,— բոռաց։

Հովիվ հրտ գահուն բլուր դրեց գետին, վաղավ.

— Ա՜ռ,— ըսեց,— իտա ճանկ օսկին քզի, վազի քաղաք, սկնչկլա տար զիմ պապուն, ըսե. «Քու տղեն, փա՜ռք աստու, սաղ-սալամաթ էկավ»։

Հովիվն էր, ուր ումրի մեջ դո՞ր էր տեսե էդ խրտըր փարա, զօսկիք լցեց ի տուրիկն (պարկ) ու ջվտկեց։

Թագավորն օր առավ զակնչկլեն, խանչեց զուր դարբասի մարդիկ, ջոջ ու պզտիկ, զէրեխեն ու զօտնագնեն, հարի ծծկեր տղեն լէ, հ՚ըմեն հեծան, գացին թագավորի տղի հ՚առեջ. խնտացան, առոքփառոք բերին, իջուցին զուր շուշաբանտ հ՚օդեն, օր թամամ կլոր իրեք տարի չըր տեսերի։

Նոր թաժա բերին զՀուրնիկն ու զՀրեղեն պսակեցին, քառասուն օր,քառասուն գիշեր, զհարսնիսն էրին, գովընդ բռնին, կերան խըմին, խնտացան։

Ըդոնք հասան ուրանց մուրազին։

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ ջաղամաթին, ղընծի լէ բան չմնաց[1]։

---

1 «Էրկնուց իրեք խնձոր» երեք շնորհ կնշանակե. «մեկ ըսողին, որ շնորհ ընդունե ասելու, «մեկ լսողին», որ շնորհ ընդունի, լսել ի միտ առնելու, «մեկ ջաղամաթին», որ եկած չեն, շնորհ ընդունին՝ հրապուրվին դան լսելու (Ծ. Բ.)։